

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«----» -----2022թ.

N ---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ
ՓՈՂՈՑԻ Խ.3 ՇԵՆՔԻ Հ.10 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2022 թվականի ծրագրի վերաբերյալ» Խ.498-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Հ. Մանանդյան փողոցի Խ.3 շենքի Խ.10՝ 43,22քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29. 03. 2021 թվականի Խ. 29032021-01-0284 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Վերա Իվանովնա Ելկինային:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ. ՄԱՆԱՆԱԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 3 ՇԵՆՔԻ Հ.10 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան փողոցի հ.3 շենքի հ.10՝ 43,22քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (նվիրել) Վերա Իվանովնա Ելկինային:

Հ. Մանանդյան փողոցի հ.3 շենքի հ.10 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.03.2021 թվականի հ.29032021-01-0284 վկայականի տվյալների՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Հ. Մանանդյան փողոցի հ.3 շենքի հ.10 հասցեում գտնվող բնակարանը Երևան քաղաքի ժողովրդական դեպուտատների գործադիր կոմիտեի 25.04.1985 թվականի հ.25788 փոխանակման օրդերով հատկացված է եղել Տամառա Ալեքսանդրովնա Յարցևային, որը մահացել է 1987 թվականին (հիմք՝ թիվ 18 պոլիկլինիկայի 1987 թվականին տրամադրված մահվան փաստի մասին հ.93 տեղեկանքի պատճենը), նրա մահից հետո բնակարանը փաստացի օգտագործվում է Վերա Իվանովնա Ելկինան, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չի ունեցել այն սեփականաշնորհել: Վերա Իվանովնա Ելկինան, համաձայն իր իսկ հայտարարության, հանդիսանում է Տամառա Ալեքսանդրովնա Յարցևայի քրոջ դուստրը, սակայն ազգակցական կապը հաստատող փաստաթղթեր ներկայացնել չի կարողացել, պատճառաբանելով Ռուսաստանում ծնված լինելու փաստը:

Վերա Իվանովնա Ելկինան 1987 թվականից բնակվում է Հ. Մանանդյան փողոցի հ.3 շենքի հ.10 հասցեում գտնվող բնակարանում (հիմք՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի «Լճափ» համատիրության նախագահի կողմից 20.10.2021 թվականին տրված հ.307 տեղեկանքը, «Լճափ» համատիրության նախագահի կողմից հաստատված 03.11.2022թ. հ.325 հարևանների հայտարարությունը, ՀՀ նոտարական պալատի նոտար Տաթևիկ Լյովայի Տաշյանի կողմից 20.01.2022թ. հաստատված անձի բանավոր հայտարարություն հայտարարությունը ճշմարտացի լինելու երդման հավաստիացմամբ): Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Շենգավիթի անձնագրային բաժանմունքի 15.02.2022թ. հ.8/1-562 տեղեկանքի՝ Վերա Իվանովնա Ելկինան առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագրով անձնագրավորվելու համար դիմել է 24.06.2019թ. և ՀՀ քաղաքացու անձնագիր ստացել է 25.06.2019 թվականին: Համաձայն բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին 05.03.2021թ. հ.8/1-740 տեղեկանքի՝ Վերա Իվանովնա Ելկինան 24.06.2019թ. հաշվառված է վերը նշված հասցեում միայնակ, իսկ Հ. Մանանդյան փողոցի հ.3 շենքի հ.10 հասցեում հաշվառումից հանված անձ

առկա չէ: Համաձայն բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին 04.02.2022թ. հ. 8/1-416 տեղեկանքի Վերա Իվանովնա Ելկինան որևէ այլ հասցեում հաշվառված չի եղել:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 07.10.2021 թվականին տրամադրված հ. ԱՏ-07102021-99-0303 տեղեկանքի՝ Վերա Իվանովնա Ելկինայի անվամբ ՀՀ տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին 15 տարիների ընթացքում վերջինիս կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ. 498-Ն որոշման Ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի: Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ. 498-Ն որոշման հավելվածի Ծրագրի 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի Վերա Իվանովնա Ելկինայի սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համյանքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ